

ՏՆՕՒԷՆ-ՆՍՐԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ


ՆԱՄԱԿ ԿՈՒ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԷ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ

Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի  
ԳԱՀԻԲԷ (ՀասպոպագիԷ)

Rédaction du journal arménien

ARCHALOVICE

HABANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵԲՇԱԲՈՒ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան, ողջ դահլիճ. 60  
Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄԵՐ  
Տարեկան Տրանկ 20  
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է  
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՍՄԱԲԸ  
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնք եւ չեն տրուիր:

### ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆԸ

ԿԻՆԸ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ

Ամեն դարերու և ամեն ժամանակներու մէջ միշտ ազատ, միշտ ընդարձակ ասպարէզ ունեցեր են այդ մարդիկ. ասպարէզ՝ խօսելու, խորհելու, գրելու և գործելու. մինչդեռ կանանց համար — մասնաւորապէս հայ կանանց համար ըսել կուզեմ — ստեղծուել է շատ սահմանափակ վիճակ մը. շատ կաշկանդուած կեանք մը:

Հայ կինը ազատ չէ գրելու անխտիր անկէն նիւթերու վրայ. « Ի՞նչ պիտի ըսեն քի մտածումը շատ անգամներ կը խեղդէ իր մտքին ու սրտին խորքէն թռչող ամենէն վեհ ձայնը, կը ջլատէ իր հոգեոյն ամենէն բարձր ձգտումները, և հետեւաբար կը կաշկանդէ իր գրելն ալ . . . Եթէ գրէ իսկ, որոշ նիւթերու վրայ կը գրէ, զորս գրելէ կը նշանակէ իրեն համար հաւերային կարծիքը, և այդ պատճառաւ, բռնադատուած, սեղմուած բան մը, որոշ չափէն դուրս չենելու ջանք մը կամ աւելի ճիշդը վախ մը կայ առ հասարակ իր բոլոր գրուածքներուն մէջ: Ազատ չէ կարծիք յայտնելու համարձակ և անկեղծ այն ամեն հարցերու մասին՝ որոց խառնուիլը անպատշաճ նկատուի է իրեն համար հաւերային կարծիքը . . . Ետ անգամներ, ընկերութեան մէջ՝ երբ խօսակցութիւնը կը դառնայ ընկերային և հանրային խնդիրներու առանցքին վրայ և կը ծեծուին այնպիսի հարցեր՝ որոնք կենսական կը նկատուին, զգուշաւոր ու երկչոտ կը տեսնես զինքը միշտ. սակայն նա կ'զգայ. համակ զգացում է ինքը արգէն. Սէր և Գուժ է միանգամայն անոր սիրտը միշտ վառուող կրակ մըն է, ուր կը տաքնան, ու կը բռնկին ամենէն նուիրական և սուրբ զգացումները. սակայն ատենք իրենց մէջ կ'այրուին, մոխիր կը դառնան, որովհետեւ հայ կինը ազատ չէ, ազատ հոսանք մը տալով իր զգացումներուն, վառել ու մաքրել նաև սիրտերն ամեն անոնց՝ որոնք իրեն շուրջը կը գրտնուին. այդ բանը կ'արգիլէ իրեն հաւերային կարծիքը . . . Եւ ոչ միայն հայ սրբերն՝ ամեն ազգերու մէջ ալ առ հասարակ կինը միևնոյն տխուր ու կաշկանդուած կեանք ունի հազիւ ուրեմն իբրև բացառութիւն կրնանք

յիշել մէկ քանի ցանցառ ազգեր՝ ուր կինը քիչ թէ շատ կ'ապրի իբրև ազատ խղճի, ազատ համոզման, և ազատ գաղափարի տէր էակ:

Շատ անգամ խորհել եմ ինքնին թէ՛ երբ մեր երկիրը դուրս եկեր է վերջապէս անծանօթ խաւարներէ, թօթափեր է իր զաւաւոր քունը, և ծներ՝ մարդկութիւնը, ո՞վ արդեօք առաջին անգամ յղացեր է դժել կնոջ համար կեանքի այսքան նեղ սահման մը. նա ինչո՞վ է պակաս « հզօր » կոչուած սեռէն . . . Առարկուի գույնէ թէ նա պակաս է խելքով, խորհելու և գործելու կարողութիւններով, թէ զուրկ է այն որոշ տրամադրութիւններէն՝ որոնք բացարձակ ազատութեան իրաւունքը կուտան այդ մարդուն. և սակայն ո՞ւր է ապացոյցը . . . :

Միթէ օր մը ուղեցի՞ն քննել կնոջ մտային ու բարոյական ընդունակութիւնները . . . Ետ հեղինակներ կնոջ հոգեբանութիւնը բրին, բայց խնդիր է թէ յաջողեցա՞ն արդեօք, գարձան ու դարձան անոր հոգեոյն ու սրտին շուրջը իսկ մինչև խորքը կամ չկրցին, կամ աւելորդ համարեցին թափանցել . . . Ե՞րբ արդեօք տրուեցաւ կնոջ այն պայմանները կամ այն տեղը՝ ուր նա մերկապարանոց ցոյց պիտի տար իր բոլոր կարողութիւնները և տրամադրութիւնները, ըլլա՞յ հանրային, ըլլա՞յ ընկերային, ըլլա՞յ նոյն իսկ հասարակական խնդիրներու մէջ:

Կնոջ ըսին. « Գուժ պիտի ծնիս, ամուսնանաս, քու կարգիդ ծնունդ պիտի տաս զաւակներու, ու մեռնիս, խոտի պէս, բոյսի պէս, աննշան և անշնոկ անցնելով աշխարհի վրայէն: Ուրիշ կոչում չունիս դուն. ընտանեկան յարկի մէջ է քեզի համար բացուած ասպարէզը, հոն ալ սակայն ազատ չես ու զածիդ պէս գործելու. հրամաններ պիտի ընդունիս և անոնց համեմատ շարժիս. դուն իրաւունք չունիս քեզի աւելի լաւ ու նպաստաւոր երեցած կերպով գործելու, որովհետեւ քու մտքերդ երկայն՝ բայց խելքդ կարճ է: »

Ահա այսպէս որոշեցին, դատեցին ու վճռեցին: Տեսակ մը մեքենայ, տեսակ մը գործիք, տեսակ մը խաղաղիք դարձուցին կինը, առանց նկատողութեան առնելու թէ նա ևս կը ձգտի գէպ ի աւելի՞ լայն ու

բարձր գործունէութիւն մը, իր խորհելու, զգալու, սիրելու, տառապելու, յուսալու բոլոր տրամադրութիւններովը, պիտի ըսեմ՝ նաև բոլոր իրաւունքներովը . . . :

Անուրանալի է թէ՛ կինը ունի իր նկարագրին մէջ զոհուելու բնական ընդունակութիւն մը ունէ նպատակի համար, միայն թէ այդ նպատակը կապ ունենայ աւելի՛ իր սրտին հետ: Նա պատրաստ է զոհուելու ի՞ր ծնողքին, ի՞ր ամուսնոյն, ի՞ր զաւակներուն համար և վերջերս այդ խիստ մտախիչ շրջանէն դուրս ալ — վկայ մեր յեղափոխական կեանքի պատմութիւնը — գէպ ի Հայրենիքի ազատութեան Ս. Գործը: Նա ցոյց տուաւ անհուն անճնուիրութիւն, վսեմ քաջասրտութիւն և հերոսական զոհողութիւններ . . . այսու հանդերձ եթէ ինքը զուրկ է ամուր նկարագրէ և առողջ կամքէ, եթէ երբեմն թուլութիւններ կ'երևան իր վրայ, ատոր մէջ ինքը, իր խառնուածքը կամ իր բնութիւնը չէ՛ յանցաւորը . . . :

(Շարունակելի) ՄԱՌԻ

### ԹՂԹԱՏԱՐԻ ԹԻՒՆՆԵՐ

. . . Խմբագիր Արշալոյս լրագրի.

Քանի մը օրէ ի վեր ազգային իշխանութեան կողմէ հրաւիրագրեր կը ցրուին, ազգային սուրբ վճարելով իրաւունք ունենալու համար ամսոյս 28 ին կատարելի երեսի. ընտրութեան. այդ հրաւիրագրերը կը զրկուին միայն Գահիրէի ա՛յն ազգայիններուն, որոնք բնիկ են, եւ ա՛յն նորեկներուն՝ որք 3 կամ 5 տարի է հոս են:

Ըսել է, ես՝ որ երբ տարի է հոս կը գտնուիմ եւ ամուրի եմ, հետեւաբար այդ հինգ տարին լրացուցած չըլլալուս համար իրաւունք չ'պիտի ունենամ ընտրութեանց մասնակցելու, թէեւ ըստ Սահմանադրութեան, ընտրութեանց ատեն ձայն եւ քուէ ունենալու օրինական 25 տարիքս լրացուցած ըլլամ:

Սահմանադրութեան մէջ այդպիսի յօդուածի մը տրամադրութիւնը չկրցայ գտնել երկար փնտռելէս վերջ, ուստի կը հարկադրուիմ մտածել որ եթէ Սահմանադրութիւն մը ունինք, կամ աւելի ճիշտը ազգային գործերու արդի վարիչ մարմինը, «ըստ ազգային Սահմանադրութեան» կ'ըսէ եւ կը գործէ, այդ Սահմանադրութիւնը համայն թուրքահայտակ հայութեան համար գոյութիւն առած է, չունենալով ունէ զարտուղութիւն, կամ բացառութիւն, ոչ մէկ քաղաքի եւ ոչ մէկ թեմի համար, հետեւաբար Գահիրէի ազգային իշխանութիւնը ի՞նչ բանի կրթնելով, եւ ո՞ր յօդուածի տրամադրութեան համեմատ, Սահմանադրութեան հոգիին բողոքովին հակառակ ուղղութիւնով կը

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ՌԻՒԹԻՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

գործէ, ու եւր «Ըստ Ազգ. Սահմանադրութեան» կ'ըսէ անանց քաշուելու :

Ազգային տրոց հոս հաստատուելը երեք տարի է, երբ մէկի թողունք առ այժմ տուրքը հաւաքելու եղանակներն ու ձեւերը . . . :

Ազգային անհատ մը իր ազգային տուրքը անմիջապէս չը կարենալ վճարելուն կամ յանկարծիք բերուելուն համար ինչու պիտի գրկուի իր ձայնէն : Պոյսը մէջ իսկ, որ Սահմանադրութեան կեդրոնավայրն է, երբէք տեղի չէ՝ ունեցած այսպիսի գրկանք մը եւ չը կրնար ալ ունենալ :

Երեսփոխանական ընտրութեանց ժամանակ ամեն Հայ պարտք ունենայ կամ ոչ իր քուէն կուտայ, մինչդեռ հոս . . . : Գաղթականներու համարեղբար տարիներու պատուար մըն ալ հնարուած է, ամուսնացեալներու համար 3 եւ ամուսնութեան համար 5 տարիի ժամանակաժամանակը, որմէ յետոյ իրաւունք պիտի ունենան Գահիրէցի սեպուիչ ու ազգային գործերու խառնուրդ ինչպէս Ամերիկայ կամ Ռուսիայ գաղթող մը պէտք է հոն 5 տարի կենայ Ամերիկացի, կամ Ռուսապատակ ըլլալու համար, նոյնպէս ալ Գահիրէի հպատակ ըլլալու համար 5 տարի պէտք է եղեր առնուազն :

Ինչ ըսենք ուրեմն ասանկ հանճարեղ գիտերու, որոնք բոլորովին զուրկ են տրամաբանական ըլլալէ :

Միթէ քաղաքի մը Հայը, երբ իր ծննդավայրէն հեռանայ եւ գաղթէ ուրիշ քաղաք, իր ազգային իրաւունքները հետը չըլլա՞ր, իր ծննդավայրը թողած կըլլայ, ինք միեւնոյն ազգին մէկ անհատը չէ՞ նորէն, եւ այդ քաղաքին եկեղեցին, ու ազգային մամիւնը հայութեանը չէ՞ :

Ամեն երկրի ու ազգութեան մէջ, մինչեւ իսկ հոս ու հոն ցիրուցան Գնչուներու ազգային պետերը կը ջանան իրենց անհատները ամփոփել, համարաբեղ, ու մի հոտ մի հովիւ ընել, ինչպէս գրուած է :

Մինչդեռ մեր Գահիրէի ազգային վարչութիւնը, սպէտ քահանայներու, եւ անխիղճ հացկատակներու հետ ձեռք ձեռքի տուած, ժամանակէ մը ի վեր գեր մարդկային եւ արտառոց ճիգեր կը թափեն, գիւտեր կը հնարեն ժողովուրդը իրենցմէ հեռացունելու, զգուցեցնելու եւ այդպէսով ազգային տեղական կեանքին մէջ մահաբեր պաղուծիւն եւ անտարբերութիւն մը յառաջ բերելու համար : Արդեօք ինչ թագուն նպատակ կայ որ մենք կ'անգիտանանք, արդեօք կուզեն ազգային եկեղեցին եւ կալուածները իրենց սեփականութիւնը դարձունել, եւ կամ ազգային իշխանութիւնը ժառանգականութեան վերածել :

Այս ամենը Ձեզի է որ նախ կը հարցունեմ, յարգոյ Ոմբագիր, իբրեւ ղեկավար ժողովրդական թերթի մը եւ հարկ եղած բացատրութիւնը ասուրներդ կը խնդրեմ :

Եթէ փոխանակ « ըստ Սահմանադրութեան » ըսելով գործելու, ըստ այս ինչ աղայի եւ կամ այն ինչ պէյի ըսէին, արդարեւ խառնուելու իրաւունք չէինք ունենար, բայց որովհետեւ Սահմանադրութեան անուսով է որ կը գործուին այս ամենը, լաւ կըզամ թէ միտակ եւ չեմ գայթակղողը Սահմանադրութիւնը այդ խելացի միջոցներով գործադրողներէն իբրեւ թագային անհատական իրաւունքին նախանձտիրոջը, քանի որ օրինական 25 տարիքս լրացուցած եմ եւ մանաւանդ 3 տարի ալ է հոս կը գտնուիմ, կուզեմ եւ կը պահանջեմ որ Երեսփոխանական քուէարկութեան մասնակցիմ եւ քուէ տամ : ( )

Պէտք եղած տեղերը պիտի գրիմ եւ քուէթուղթ պիտի ուղեմ, ազկէ առաջ եթէ պէտք կայ բացատրութեան, տուէք, կազաչեմ :

Ն. Գ.

( ) Եթէ Ձեզի պէս ուրիշ փափաքողներ ալ կան քուէ ապու, գրաւոր կերպով Ձեր խնդրը ներկայացուցէք նախ քուէարկութեան հոտմտողովին. եթէ չյուրի Ձեր խնդրը, այն աստի քուէարկութեան օրը տարէք եւ տուրի մէջ ձգեցէք ձեր քուէներն. բայց այժմէն գիտցէք որ այն օրն ալ փոխաներ եւ շղթաներ կանխապատրաստուած կ'ըլլան թերեւս :

Խ.

ՀՈՆՏՈՆ 16 Նոյ. — Թայլոյի թօքիօէ ստացած հեռագիր իմը կ'իմացնէ որ շըրջաբերութեան ելած այն լուրը թէ՛ Ռուսիոյ եւ Ճաբոնի յարաբերութիւնները ձգտեալ են, հիմ չունին :

ԲԱՐԻՉ 15 Նոյ. — Ձինացիք Քուօչանի մէջ երկու Գաղղիացի սպայներ սպաննած են : Գաղղիացի ծովակալն ձերբակալել տուած է եւ կը պահէ Հայնանի քաղաքապետը. Բէքինի Գաղղիոյ ներկայացուցիչը հրաման ստացած է գոհացում մը պահանջելու :

ՀՈՆՏՈՆ 15 Նոյ. — Գերմանիոյ կայսրը յառաջիկայ կ'իւրակէ Բորսմաութ պիտի համար : Նորին Վեհափառութեան պիտի ընկերանան Պր. Վոն, Պիւլով, կայսրուհին եւ իւր զաւակներէն երկուքը :

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Օրուան ամենէն տաք վիճաբանութեան նիւթն է այժմ Գահիրէի ազգայնոց համար սահմանուած Ազգային տուրքը, որոյ մասին հակառակ այս ու այն անկիւններու մէջ տեղի ունեցած քննադատութիւններուն, հակառակ գանձումի եղանակին դէմ եղած դիտողութեանց՝ ու գանձման եւ երեսփոխորութեան մէջ թողուած կարճ ժամանակամիջոցին, կը հաւաստեն թէ Ազգ. տրոց հաստատուելը՝ որ պարզապէս ընկալելի չըլլալի մէջ ընտրութիւններ կատարելու նպատակը ունին եղեր, պիտի յաջողին իրենց նպատակին մէջ, խեղդելով եւ ոչնչութեան մատնելով այնպիսի ձայնը՝ որոնք կրնան ապագային մէջ գոնէ շատ օգտակար ըլլալ ազգին եւ ազգային բոլոր հաստատութեանց :

Ազգային տրոց հաստատման դէմ ցոյց տուած պատճառները բազմաթիւ են, եթէ հայ ժողովրդեան անհատներուն մէջ չըլլազայի մէկը, յայտնուած կարծիքներու մէկ վնջակը կազմելով վարչութեան նուիրելու նպատակաւ :

Ոմանք կ'ըսեն եղեր թէ անով չլթաներ շինել պիտի տրուին ազգային տուրք վճարողները չլթայի զարնելու գիւրուծիւնը ձեռք բերելու համար :

Ոմանք, տարին տասներկու ամիս կ'իւրակի օրերը եկեղեցիին դուռը հակելու համար հրաւիրուած ոստիկաններուն սահմանուած ամսականները պիտի վճարուին կ'ըսեն, որոնք բաւական կըրրիկ գումարի մը պիտի հասնին եղեր :

Ոմանք, ոստիկանի եւ ֆէյդայի համար մինչեւ ցարդ բացուած խոշոր վարկէն գոյացած ազգային անտուկին բացը գոցելու եւ հաշիւը entre nous կարգադրելու նպատակաւ է կ'ըսեն :

Ոմանք, Առաջնորդական փոխ-տեղապահին նուիրական անձը պաշտպանելու անձնական թիկնապահներուն տրուելիք ճանապարհածախքերը վճարելու նպատակաւ է կ'ըսեն :

կաւ է կ'ըսեն հաստատուած ազգային տուրքը :

Ոմանք, ինչ ինչ նոր պաշտօնով լրտեսներ ու լրտեսապետ մը եւս աւելցնելու համար է, կ'ըսեն, արդէն գտնուածներուն վրայ :

Ոմանք ալ ըսած են թէ ազգ. տուրք սահմանողները եւ ազգային վարչութեան անդամ մնալու ցանկացողները իւրաքանչիւրը նոյն իսկ 30ական եգիպտական ոսկի ազգ. տուրք տալ խոտտացած են, չվճարել ուզողներուն քուէները իրենք ծախու առնելու եւ իրենք իրենց վրայ քուէարկելու գեղեցիկ մտածումով :

Ինչ որ ալ ըլլան այս դիտողութիւններն եւ կազմուած փնջակն ալ որչափ անուշ հոս չունենայ ոմանց համար, մեր կարծիքն այն է թէ ազգային մը տարեկան 25 զրուշ այսինքն ամսական երկու կամ շաբաթական 20 փարայ վճարելով իր անհատական իրաւանց տէր դառնալը ամեն պարագայի մէջ բանաւոր է, միայն վարչութիւնը անիրաւ է երբ կը պահանջէ որ ութը օրէն այդ գումարները ազգ. Առաջնորդարան հասնին : Եթէ նպատակ ունէր որ ազգ. տուրքը քուէներու ձայնները նուազեցնելու իբր միջոց պիտի գործածէր, գոնէ չ'մեղադրուելու համար մէկ երկու ամիս կանուխէն հարկ էր որ յայտարարէր իր այդ որոշումը : Հիմակ քանի որ ափսոսիչ ընտրութեան կը ձեռնարկէ եւ յայտնի է թէ 40—50 քուէներով երեսփ. անդամոց ընտրութիւն կը կատարէ, ոչ մէկ աստի վաւերական եւ պատկառելի կրնայ կոչուիլ այդ ձեռով ընտրուած վարչութեան մը անդամները : Պէտք է որ ազգային վարչութիւնը այս մասին գոհացուցիչ որոշում մը տալով ազգին անհատներուն դժգոհութեանց պատճառները մէջտեղէն բառնայ : Հիմակ Գահիրէի մէջ մօտաւորապէս 3000 հայ ազգային անհատներ կան, որոնց իրաւունքը յափշտակելը այնչափ ալ հեշտ չ'լինիր կարծենք, որչափ ալ վարչութեան անդամոց յամառութիւնը եւ եսասիրութիւնը ծայրայեղութեան հասած ըլլայ :

### ՔԻՉ ՄԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Անցեալ երեքշաբթի գիշեր մեծ պատճառութիւններով Պէնչեան խումբը՝ արիւնջիք թատրոնին մէջ ներկայացուց Պէշիկ-թաշեանի հեղինակութիւններէն Արշակ Բ. ողբերգութիւնը հինգ արարուածով :

Որչափ պնման Պէշիկ-թաշեան ջանացած էր իր հեղինակած ողբերգութեան կենդանութիւն տալ, նոյնչափ ալ հայ խումբը, (անպատճառ իսկ խումբ ըլլալուն համար) հակառակ իւր մեծամեծ յորջորջուած պատրաստութեան, հակառակ չորս անձերէ բաղկացեալ մասնախումբի մը հոգաւորութեան եւ հակողութեան, յաջող ներկայացում մը տուաւ չինք կարող ըսել :

Պ. Ս. Պէնչեան՝ Արշակայ, Տիկին Մարի՝ Սիտակի, Պ. Շաւարշ՝ Որմիդգի, եւ Պ. Ս. Պէնչեան Շապուհի դերերուն մէջ արդարեւ յաջողեցան կրնանք ըսել, եթէ երբեմն թագաւորական եւ իշխանական թագերը նպատակաւ գլուխներէն խոյս տալու անխոհեմութիւնը չ'գործէին :

Մնացեալ գերակատարներն ո՛չ յայտարարութեան համաձայն իրեց ստանձնած գերերը կատարեցին և ոչ ալ պահանջուած յարմարութիւնը ցոյց կուտային։ Ան կատու մը անցած կերպէր հայ խմբին մասնակցող շատ մը անդամոց մէջէն։

Ժողովուրդին մէջ ցրուած յայտարարութեան համաձայն ներսէսի գերը ստանձնած էր Ա. Վրոյր և թատերաբեմին վրայ անակնկալ կերպով ներկայացաւ ուրիշ մը, որ ոչ միայն գերը գոց ըրած չէր, առհասարակ բոլոր հայ գերասանաց սովորութեան համաձայն, այլ և ձայնի անյարմարութիւնովն և արտասանութեան պակասութեամբն ներսէսի գերը աւելի կ'սպաննուէր քան թէ կը կատարուէր։

Բանտապահի գերակատարը, Մուշկանի գերը կատարելու ստիպուած կ'երևէր և այս փոփոխութիւնը քնականաբար վերջին պահուն տեղի ունեցած էր, սրովհետև Մուշկան՝ Շապուհ արքային մէկ շարժման կամ շիննարարին կողմ ըլլալու տպաւորութիւնը կը ձգէր հանդիսատեսներուն վրայ, քան թէ Պարսիկ իշխանի մը։

Ընդհանուր տպաւորութիւնը խիստ լաւ և ողբերգութիւնը կատարեալ յաջողութիւն մը պիտի լինէր եթէ Պէնլեանները չըջապատող միւս գերակատարները բաւական վարպէ ըլլային։

Ստուգելու պէտք է մեղադրել Պէնլեաններն ալ, որ իրենց գերերը գոց ուսանելու մէջ շատ ետ մնացած են, ինչպէս որ ետ կը մնան յարմարաւոր խումբ մը կազմելու մէջ։ Բայց անգամ մ'ալ պէտք է գերասաններու ընդունած վարձատրութեան քանակը նկատի առնել թէ գոհացուցիչ է։

Լէպլէպիճի մասին վրայ խօսելու աւելորդ է բողոքովին։ Պ. Ս. Պէնլեան իր Լէպլէպիճի հերոսութեանը եթէ մեծ արատ մը բերաւ, այն ալ այդ գիշերուանը պէտք է նկատել։

ԱՐԳՈՍ

ԵՍ ԻՍ ՀԱՌՍ ԷՒ

Ճիշտէլ թիւ մէջ մարդ մը անձնասպան ըլլալով հետեւեալ գրութիւնը թողած է իւր սենեկին մէջ։

«Ես որբեայրի կնոջ մը հետ ամուսնացայ կինս չափահաս աղջիկ մը ունէր. հայրս ամեն օր մեր տունը երթեկեկելով իմ հոգեզուակ աղջկանս սիրահարած և իրեն հետ ամուսնացած էր. այս հաշուով հայրս իմ փեսաս եղած էր և աղջիկս հօրս կինը ըլլալով, իմ մայրս կը համարուէր. քիչ յետոյ կինս մանչ զուակ մը ծնաւ. այս աղան հօրս աներձագը և իմ ալ մերձագայրս եղած էր, որովհետև խորթ մօրս եղբայրն էր. հօրս կինն ալ մանչ զուակ մը ծնած ըլլալով՝ այս տղան բուն իմ եղբայրս էր և աղջկանս զուակը ըլլալուն միևնոյն ատեն թոռս ալ էր։»

«Ուրեմն կինս մօրս մայրը ըլլալով իմ մեծ մայրս ալ էր, ևս ալ կնոջս թէ ամուսինը և թէ թոռն էի, որովհետև իւր աղջկանը որդին կրնայի համարուէր, քանի որ ամեն մեծ մօր ամուսինը իրեն ալ հաւը կը համարուի, այս հաշուով ևս իմ հաւս էի։»

Ե. Պ.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ՕՐ . . .

Այս քանի՛ կորոզ անգամն է, սիրելի Եւքարիս, որ միանգամայն երանութեան թէ թշուառութեան ձերմակ աշխարհը վերադարձնա յետոյ՝ գրիս ձեռք

կ'առնեմ քեզ երկտող մը գրելու համար, ու գրիչս, ա՛խ խեղճ գրիչս, անզգաւարար վար կ'իմայ, հակառակ իմ բոլոր կամացը։ Ու սարսուռ մը, որ քա՛ն թիթեւ ու անոյշ, կ'անցնի վրայէս։ Ինչո՞ւ արդեօր։

— Ինչո՞ւ. Pauvre enfant, պիտի ըսես անշուշտ, կը կռահեմ այդ սարսուռի նշանակութիւնը. գաւառացի խանձարուրէ ժառանգուած տխմար վեհերոտութիւնն ըլլալու է պատճառը։

Այո՛, սիրելի օրիորդ, նախ կողքամ որ որջա՛փ անարժան եմ, ես խեղճ հասարակ մահկանացու, Մուսայից սիրեցեալ գեղաշնորհ էակի մը հետ թղթակցելու ի՞նչ բանի պիտի վերագրեն արդեօք Արեւալոյս ընթերցողները՝ բաց նամակ առ Օր. . . վերնագիրը կարգալով։

— Նայինք սենեկնք, ասոր տակը բան մ'ըլլալու է, պիտի ըսէ մօրուսաւոր մը։

— Սիրահարութիւն. ուրիշ ի՞նչ կայ Մըսըր, — էֆէնտի՛մ, գրող կարգացողներու զեվզեկութիւն. տահա ուրիշ բան մ'ալ կայ նէ թող ստեղծեն մեր եեմի մօտաները։

— Այլիտարական ֆանթազիստ հոսանքն է որ չըջան կ'առնու, պիտի ըսէ վերջապէս չորրորդ մը։

Եւ ալ ի՞նչ գիտնամ ինչեր ու ինչեր պիտի ըսուին երբ այս տողերը կարդացուին։ Ու բսել թէ՛ այդ ամեն քմածին ենթագրութիւններէն և ոչ մին իրաւացի է։

Բայց հոգ չէ օրիորդ. ի՛նչ կուզեն այն թող ըսեն. կը բաւէ միայն որ մեր բաց գրութեանց մէջ վրան բաց բաներ չգրուին։ Զգիտեմ կախորժի՞ս արդեօք Զօրայի գործերէն. ես, իմ կողմանէ, կարճ խելքովս կ'ատեմ այն գրական գործերը, որքան ալ գեղեցիկ ըլլան, որ մարդը՝ արդէն չարին հակամէտ, դէպ ի անբարոյականութեան ստրկացնող ձամբան կ'առաջնորդեն։

Որչա՛փ ուրախ եմ, սիրելի՛դ իմ Եւքարիս, որ միւսմտածոտ նկարագրութիւններ չպիտի ընեմ քեզ այս անգամ. ոչ անապատէն՝ և ոչ հանդերձեալ աշխարհէն է որ կը գրեմ այս տողերը։

Լուրջ նիւթի մը վրայ գրել կուզեմ։

Կը յիշես անշուշտ, սիրելի Եւքարիս, որ անցեալ տարի՝ անապատի մարդուն ուղղած մի գողտր նամակիդ մէջ մողադրանաց հեղեղ մը կը թափէիր խեղճ գաւառացի կիներուն վրայ։ — Գաւառացի կիները, կ'ըսէիր գեղեցիկ սեռին յատուկ հեգնութեամբ մը, դեռ խոր քունի մէջ են. ևւրոպական à la mode գաղափար մը յղանալու և գործադրելու բնաւ ընդունակութիւն չունին դեռ։ Սրբաբերութիւն և անոնց մէջ ի՞նչ տարբերութիւն . . . ու անականները կարկտանոս կը շարունակուէին։

Թող ներուրի ինձ պատասխանել թէ անիրաւ և չափազանցեալ են այդ գիտողութիւնները։ Կըրտուին որ գաւառացի կիները խեղճ ու կրակ արարածներ են, Եւքարիս արժանի թոռները Շէնքով շնորհքով երկու խօսք խօսել չգիտեն, կրթուած չեն, գրիչ շարժել չգիտեն. օրը գէթ մէկ անգամ bain ընել չունին, ոչ պարել՝ ոչ քալել գիտեն և ոչ ալ . . . հեծելանիւ նստիլ. թատրոնէ շատ քիչ կախորժին, քուպիթներուն մէջ թափթիած են, երեսին ալիւր քսել չունին, ևկեղեցոյ մէջ բըլզակնուն վրայ հոտաւէտ վարդ չեն կրեր. վերջապէս սիրելու կամ սիրահարելու եղանակը չը գիտեն . . .

Ո՛հ, այդ խելճ Եւքարիս թոռները, իրենց բոլոր թիրուածիւններովը, աւելի նախամեծար՝ աւելի պաշտելի են քան թէ այն ալիստեղալ գեղանի հայուկիները, որոնք ևւրոպացիներու նմանիլ ու գելով՝ ոտքով ու գլխով ինկած են ասոնց արտակարգ (extravagant) նորածեւութիւններուն մէջ։

Յաւայի են արգասիւն այն տգեղ կողմերը որ գաւառացիներու սեփականութիւնն է, և որուն մօտէն ծանօթանալու դժբաղդութիւնը ունիմ։ Բայց շատ չ'մեղադրենք զանոնք, օրիորդ։ Յանցանքը անոնց չէ, այլ այն ողորմելի հայրենի ին՝ ուր դեռ նոր սկսած է զարգացումը մուտք գտնել։ Մալթիներ ի բոլոր սրտէ որ այդ զարգացումը, առանց հիմնիվեր տապալելու մեր տոնմային չընա-

ղագիւտ բարեմասնութիւնները, աւելի բարձր մակարդակի մը հասցնէր մեր ապագայ սերունդը՝ առ յաւէտ մեր աղգային յատկանիշը անեղծ պահելով։ Ու այն ատեն պիտի տեսնէք թէ՛ գաւառացի կիներն ալ նոր սփռնաղարդ օրիորդներու հետեւելու ընդունակ են — ո՛ւր էր թէ ձեր բարի կողմերուն մէջ — ինչպէս որ երեւոյթներն ալ այժմէն կը հաւաստեն։

Ասկէ քանի մ'ամիսներ առաջ, երկար անտարբերութենէ մը վերջ, այցելութեան մը փոխանակելու հարկին մէջ ըլլալով՝ հայրենակցի մը տունն կը գտնուէինք, ուր բարեբաղդաբար ուրիշ այցելու հիւրեր կային։ Սովորական ձեւակերպութիւններէն և մեծարանքէն յետոյ՝ մեր խօսակցողութիւնը կանգադառնար քիչ մ'ամէն նիւթերու վրայ։ Տանտիկինն էր որ հիմա, քաղաքավար ժպիտով մը, կը մեղադրէր զիս թէ ինչո՞ւ այսպէս «եամպան» եմ, այսինքն այցելութիւններս յաճախադէպ չեն։ — Ներեցէք, Տիկին, զբաղումներս բազմաթիւ են այս պահուս, Ընթերցասիրաց Ընկերութեան կողմանէ, ուր Գործ. Ժողովոյ մասնակցելու պատիւն ունիմ, Վանի սովակալներու ի նպաստ թատերական ներկայացում մը տալու ձեռնարկին ու . . .

— Ո՛ւշ, փչիլ այդ Կուպը, որ մէյ մ'ալ գիշերները կանուխ տուն գաս, ընդմիջելով գոչեց մայրս մայրական անմեղ բարկութեամբ մը։

Ո՛վ գթութեան արժանի մայր, ինք իսկ, դեռ երէկուան կոտորածներու արտասուածք որ ականասեսը, տրամադրութիւնը չունի ըմբռնելու փառքը զաւակին, որ սուրէն ու կրակէն աւելի՛ թնուածեան անողոք շանթերէն հալածուած արեւակիցներու պատառ մը հայ հասցնելու ազնիւ ձեռնարկին իւրովսանն աջակցելու կոչուած է։ Այս պարտականութիւնը ներկաներուն բացատրելու պահուս՝ ունկնդիր կին մը հետաքրքրուեցաւ գիտնալ սիրահուշակ Գլիւպի նպատակը և կազմակերպութիւնը. ու զմայլած, խանդավառ չեչտով մը՝ — Ես ալ կիներուն համար սրճարան մը հաստատել կուզեմ, ըսաւ, ուր երբեմն հաւաքուէինք, զիրար ճանչնայինք, զիրար հասկնայինք և Տէր պապա մը դար ձառէր մեզ օրուան այժմէութիւններուն վրայ։

Bravo, Տիկին, շատ լա՛ւ կ'ըլլայ։ Պօլսեցի մը, փարիզեան թերթի մը թղթատող Սիբիլ մը ըլլալու էր անշուշտ այդ յանդուգն գաղափարը փայտայող կինը։

Ո՛չ, Օրիորդ, պարզապէս գաւառացի կին մը. կենացս մէջ, գաւառացի կնկան մը բերնէն, այդքան նոր, այդքան արատաւոր, այդքան յանդուգն, այդքան զարմանալի, և չգիտեմ ինչ պիտի ըսէր Մատամ սը Սէվիլիէ, այդքան հրաշալի բան մը լսած չունի։ Զարմանքս չափ չունեցաւ։

Դժբաղդաբար՝ այդ երանելի որճարանի բացումը, որ արգարեւ իր անագին դժուարութիւնները ունի, տեղիչունեցաւ դեռ, ևս այդ բարի կինը իր լուրթեան մէջ փնտտելու է թերեւս իր մտադրած ձեռնարկի իրագործումը։ Բայց հոգ չէ, զի աւելին կայ ընելու, սիրելի արժէտուկիներ։ Սըրճարան մը հաստատելէն առաջ՝ ականջ զրէք նախ ձեր հետաքրքիր փոքրիկ եղբայրներու և ջոյրերու ալիաղորմ ճիշին՝ որով գթութիւն կ'աղագակեն ձեզ։ Կարգացիք անշուշտ Արեւալոյս մէջ թէ մեր թշուառ որբերուն օգնութեան ձեռն կարկանդակ նպատակաւ՝ Ընկերութիւն մը կազմուած է հիմա Գահիրէ։ Զօրաւոր սեռը՝ անոնց ի նպաստ կրցածը ըրաւ ու պիտի ընէ։ Ինչքա՛ն գովելի պիտի ըլլայիք գուք ալ, եթէ ձեր մէջ մասնաժողով մը կազմէիք, տունէ տուն պատէիք ու կարգ մը համակիր անգամներ գտնէիք յօգուտ Որբասիրաց Ընկերութեան։

Դիւրին է ինձ երեւակայնել, սիրելի Եւքարիս, թէ քեզի պէս աղւորիկ ու շնորհազարդ բանաստեղծուկներ որքա՛ն պաշտողներ կուսենան. իսկ այսպիսի եղբայրասիրական բանի մը ձեռնարկելով՝ վաղը որբերը պիտի ըլլան, որ եթէ իրենց ճակատագրի գիտակցութիւնը ունենային՝ մանկական անմեղ թեւերին բազկատարած, պիտի օրհնէին ձեզ, հայցելով Երկնաւորէն որ մէկ մէկ արժանավայել . . . շնորհէ իրենց առաջինաւոր արմաւենուկներուն ու Եւքարիսներուն՝ դարման մը հասցնելու համար սիրատոջոր սրտերին հարկեցնող կրակին, որով կը տանջուին . . .

Ս. Օ.

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿ 17 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	8367	չափած է	Փրանք	1000
Բ. "	2977	"	"	200
Գ. "	861	"	"	100
Դ. "	1804	"	"	50
Ե. "	5572	"	"	50

Հետևեալք 25 ական ֆրանք կը շահին

8475	7212	7913	4245	2877	930
244	7552	8226	5135	968	9019
8093	733	5956	9985	6416	9718
932	1448	5181	4407		

ԵՄԱՆՈՒԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, (նկերութեան սնտուկին ձեփաւ կանուցութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԿՈՐ ԴԱՍԵՐ

ԶԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ԶԱՍԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ Ի ՏԱՂՈՒՅՏԻՅԷ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ երեկոյները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի աւանդուին Անգղ. Գաղղ. Արաբերէն և Հայերէն դասեր:

Իրմել առ Մ. Յ. ԳնԱՃԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Փոօզի Պափ վանաւասան մօտերը, Կամե-էլ-Պեհաթի ճիւղ գիւմարը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր քաջած փուսին մէջ, անխաղախ աւելորէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաթներ, եւայլն: Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց զիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու: Յանձնարարութիւնը ամենայն ճշգրութեամբ եւ փութով կը կատարուին: 16-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

Մ Ա Ն Կ Ա Ր Ա Ր Ջ

Վկայեալ սեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանին  
Իւր բնակութիւնը հաստատած է Ի Շարա Ապա-իւ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին զիմաց:  
Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:  
Իրեն զիմողները կատարելագոյն գոհ պիտի մնան: 19-24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՏԻՇԵԱՆ

ՎԱՋԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱՑ

ԳԱՀԻՐԷ, — Մուսի փողոց, — ԳԱՀԻՐԷ  
Ս. Ե. Ս. Սեհնավիի վանաւասան գիւմար

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնքօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՒՔ ՀՈՆ Եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, ադամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանք ամենաբնորոք տեսակներէն զարգեղէններ, շորաքներ, օղի, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԿՈՐ

32-50

ՏՐՈՒՅՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻՆԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ  
Ապսին, Շարե Գուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակոսներ:

Կը դադարեցնէ վայրկենապէս ակոսայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակոսներուն ստիւտնութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 4 1-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՁԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ  
Տայիէի Սանիէի ճիւղ գիւմար

Ամենաբնորոք ապրանքներէ կը պատրաստէ խիստ կողիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:  
Գիները չափաւոր եւ աժան:  
Փորձ մը միայն կը բաւէ: 23-24

ՏՊԱՐԱՆ-ՎԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԻՒՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր աւաւտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրատիրագրեր, Այցեխարտեր, Ցանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց եւ վաճառականներու սպազրակաւ առեւն պիտի տրուին:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտնչութեան, ճշգրտագոյնութեան և դներու չափաւորութեան մէջ:

Եզրագրութիւնն ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅ ԲԻՒՐԿՅԻ ԱՐՇԵՍԱԿՈՐՆԵՐԷՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻ

ԳԱՊԱԷԼ-ԵՍԷԼԻՔ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները երոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն զիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ ևլն:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կը կ'ընեն, կրնան այս առիթէն օգտուիլ:

2-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱՒԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստըզ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու փրայ փորձուած և հիւանայի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զրշ ող (2 ֆրանք):

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրագրութիւն մէջ միակը:

Ակոսայի փոշի և ջուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոյցները: 4 4-8